ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

22 մայիսի 2015 թվական N 15 -Ա

ԳՆԴԱԿՈԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի ապրիլի 22-ի թիվ 417-Ն որոշումը

կարգադրում եմ.

1.Գնդակոծությունների հետևանքով մարզի համայնքներում բնակիչներին պատճառված վնասները վերացնելու նպատակով պետական աջակցության ցուցաբերման հարցերով զբաղվելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

հանձնաժողովի նախագահ – Ադամյան Կարեն, մարզպետի տեղակալ

քարտուղար– Ափինյան Ֆելիքս, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ

անդամներ - Մխիթարյան Միշա- մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ

Սուքոյան Վաղարշակ - մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ,

Բաբլումյան Ասքանազ - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ,

Բաղալյան Գրիշա- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ,

Գևորգյան Արման – մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վարիչ

2.Հանձնարարել հանձնաժողովին ուսումնասիրել բնակիչներին պատճառված վնասների հետևանքների վերացման նպատակով <<Գեոպրոեկտ>> ՍՊԸ-ի կողմից մարզի համայնքներում իրականացված ուսումնասիրության արդյունքում կազմված վնասված գույքի շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունը՝ տուժած բնակիչներին պետական աջակցության հատկացման չափի վերաբերյալ և ներկայացնել առաջարկություն աջակցության տրամադրման համար:

3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

2015 թ մայիսի 22
ք Իջևան